ԴՊՐՈՑԱԿԱՆ

ՆՈՐ—ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԹԵՄ. ԴՊՐԱՆՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ 1912—1915 Թ.

I

Ամենայն Հայոց Հայրապետը՝ 1912 Թ. դեկտեմբերի 27-ին արձակած սրբատառ կոնդակով՝ բարեհաճել է հաստատել Թեմական Դպրանոցիս Հոգաբարձական ներկայ կազմը, որի անդամներն են. պ. պ. Զալխուշեան Գրիգոր, Ծամբուրեան Յովակիմ, Բերբերեան Մովսէս, Դերիջանեան Աբգար, Ռէյիզեան Գէորգ, Շապովալեան Մարտիրոս, իսկ անձնափոխանորդները՝ պ. պ. Ծալփախչեան Ծաչատուր, Սահիանոսեան Ներսէս, և Մեսրիկեան Սահակ։

Ներկայ կազմի պաշտօնավարութեան եռամեայ շրջանը լրանալու է սոյն դեկտեմբերի 27-ին. այս իսկ պատճառով՝ Թեմիս Սրբազան Առաջնորդի կարգադրութեամբ՝ ծխական ժողովներ գումարուեցան վաթսուն պատգամաւոր ընտրելու նպատակով, որոնք այսօր հրաւիրուած են՝ Դպրանոցիս Հայրապետահաստատ կանոնադրութեան 13-րդ յօդուածի համաձայն՝ եռամեայ ժամանակով քուէարկութեամբ ընտրելու վեց «բանիբուն և արժանաւոր» անձինք հոգաբարձուի պաշտօն վարելու և վեց էլ անձնափոխանորդ նոյնքան ժամանակով՝ հարկ եղած ժամանակ նոցա փոխարինելու համար։ Այսպէս ուրեմն՝ կանոնադրութեան զօրութեամբ՝ մեր այսօրուայ ժողովի օրակարգը միայն մի խնդիր պիտի ունենար, այն է ընտրել վեց հոգաբարձու և վեց անձնափոխանորդ՝ և ցրուէր, ինչպէս եղել է մինչև այժմ։

Սակայն ներկայ Հոգաբարձութիւնը՝ առիթից օգտուելով կամենում է հասարակութեան ներկայացուցիչների առաջ դնել Դպրանոցիս տնտեսական, ուսումնական և բարոյական վիճակը, ինչպէս նաև իւր եռամեայ գործունէութեան պատկերը տալ ընդհանուր գծերով, որպէս զի հասարակութիւնն իմանայ՝ թէ ինչ վիճակի մէջ է գտնում

Թեմիս ամենամեծ ազգային կրթարանը, որ կոչուած է իւր շուրջը խմբելու մայրենի հողից կտրուած, օտարանալու վտանգին ենթակայ հայութեան մի սուրբ հատուած և իւր յարկի տակ առնելու նրա մատաղ սերունդը՝ ազգային դաստիարակութիւն տալու, ազգային ոգի ներշնչելու համար, նեցուկ հանդիսանալով այդ զանգուածին՝ օտարութեան մէջ՝ իբրև հայ ապրելու։ Որպէս զի հասարակութիւնն իմանայ՝ թէ Հոգաբարձութիւնն ինչ խոհեր է ունեցել և ինչ քայլեր արել Թպրանոցիս անտեսական, ուսումնական ու բարոյական վիճակը բարձրացնելու և նրան կանոնադրութեամբ նախատեսմանուած նպատակին առաջնորդելու համար։

Հոգաբարձութիւնս պարտք է համարում նաև յայտնել, ի խոյս թիւրիմացութիւնների, որ այս բոլորը հաղորդում է առ ժամանակ ի գիտութիւն՝ պատրաստ լինելով նաև ժողովի մեծամասնութեան կարծիքն արձանագրելու իբրև ցանկութիւն, որ կարող է որոշման բնոյթ կրել՝ Սրբազան Առաջնորդի հաճութիւնը և Վեհափառ Հայրապետի հաստատութիւնը ստացուելուց յետոյ միայն։

Թողնելով անտեսական հաշուետուութիւնը Հոգաբարձութեանս պ. քարտուղարին և ուսումնականն ու բարոյականը՝ պ. Տեսչին, կփորձեմ տալ Հոգաբարձութեան եռամեայ գործունէութեան ընդհանուր պատկերը՝ առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու և ընթացիկ ու մանր խնդիրներ շօշափելու։

Հոգաբարձութիւնս իւր եռամեայ պաշտօնավարութեան շրջանում բռնել է այն ուղին, որ մատնանշել է Վեհափառ Հայրապետը իւր սրբատառ[*] կոնդակով. «Դուն գործել նախ՝ յաղագս բարուոք կարգաւորման և կառավարութեան տնտեսական վիճակի և գործոց Թպրանոցի և երկրորդ՝ յաղագս դաստիարակելոյ զմանկունս, յանձնեալս ի խնամս հոգաբարձական և ուսուցչական մարմնոյ, բարոյապէս և մտաւորապէս ըստ ամենայնի անթերի»։

Սրբատառ կոնդակի այս խօսքերը որոշակի ասում են, որ Հոգաբարձութեանս պարտականութիւնն է Թպրա-

նոցի տնտեսականը, ուսուցականն ու բարոյականը բարձր վիճակի մէջ պահել։ Նրանով որոշւում է նաև հասարակութեան հարցասիրութեան շրջանակը, և՝ թւում է թէ՝ Հոգաբարձութիւնս հասարակութեան դռնացում տուած կլինի, եթէ ցոյց տայ՝ թէ ինչ է արել՝ վերոյիշեալ երեք տեսակէտներով՝ իւր եռամեայ պաշտօնավարութեան շրջանում։ Ահա այդ խնդրի պարզաբանութեանն է, որ այժմ պիտի անցնեմ։

Ինչպէս իւրաքանչիւր հաստատութիւն, նոյնպէս նաև կրթականը բարձր վիճակ ունենալու համար կարօտում է նիւթական ապահովութեան։ Այդպէս խորհելով՝ Հոգաբարձութեանս յատուկ հոգան է եղել առաջ ու առաջ Դպրանոցիս ապահովութեան մասին մտածել և նորա կատարեալ ապահովութեան ապագայ կառուցուածքի հիմքը դնել։

Իւր դրած նպատակին հասնելու համար՝ նա փորձել է նախ՝ իւր ձեռքն եղած կալուածներն աւելի նպատակայարմար շահագործել, եղած արդիւնքներն ու եկամուտները ընդարձակել և երկրորդ՝ նուիրատուութեան և այլ միջոցներով նոր աղբիւրներ հայթայթել, նոր կալուածների տիրանալ։

ա. Կայսերահաստատ հիմնական կանոնների բ. յօդուածով և Հայրապետական ս. Կոնդակով Դպրանոցիս Ճեայուն աղբիւրներից մէկն է համարւում Թեմիս եկեղեցիների տուրքերը։ Հոգաբարձութիւնս՝ Դպրանոցիս ապահովութեան միջոցներն ուժեղացնելու նպատակով յատուկ նիստեր է ունեցել յատկապէս Դպրանոցիս այս եկամուտն ընդարձակելու համար, և ծրագրել է Վիճակիս եկեղեցիների տուրքերն աւելացնել և՝ մինչև այժմ տուրքից վերծ Ճեացած եկեղեցիներն ու վանքերը տուրքի ենթարկել՝ կարգաւորելով սահմանեալ օրինական եղանակով խնդիրը յարուցանել, ուր հարկն է, որ ծրագրուած յաւելուածները կատարուեն։

Նոր կարգաւորութեան համաձայն՝ քաղաքիս ս. Յովհաննու-կարապետի եկեղեցու 600 րուբլի նպաստը դարձել է 1,000 ր., ս. Գէորգ եկեղեցու 500 ր.—700 ր., Թոփ-

տիւ ս. Սարգիս, Զալթըի ս. Համբարձում և Մեծ-Մալայի ս. Աստուածածին եկեղեցիների 75-ականը—100-ական, Նիավիթայի և Փոքր-Մալայի եկեղեցիների 25-ականը—50-ական, ս Խաչ Վանքի 3500 ր.—5000 ր., Պետրոգրադի 750 ր.—3,000. իսկ Ղրիմի ս. Խաչ Վանքը և Թոփտիի Նորաշէն ս. Փրկիչ եկեղեցին, որոնք ցարդ ազատ են եղել՝ տուրքի ենթարկել, առաջնին՝ 500 ր. և երկրորդին՝ 100 ր., որով Դպրանոցիս եկամուտը կազմի 5075 ր.։

բ. Հիմնական կանոնների նոյն յօդուածով՝ միայն աղբիւրներից է նաև Խալիբեան դպրոցի շէնքն ու նորա սեփական հողաբաժինը։ Հոգաբարձութիւնը՝ ի նկատի առնելով, որ այդ կալուածը տարիներէ ի վեր բացարձակապէս եկամուտ չբերելուց զատ՝ բաւականաչափ ծախս է նստել Դպրանոցիս, որոշել է վաճառել և փոխարէնը ձեռք բերել Ռոստովում կամ Նախիջևանում մի այլ կալուած, որպէս զի Հոգաբարձութիւնը հնարաւորութիւն ունենայ վրան անմիջական հսկողութիւն ունենալու և մշտական ու խոշոր եկամուտ ստանալու։ Խալիբեան դպրոցի վաճառման հարցը յարուցուած է եղել տարիներ առաջ և կարգադրուած դիմելու Վեհափառ Հայրապետին ու նորա հաճութիւնը ստանալու, սակայն անհետևանք է մնացել (Տես Արձ. № 7 20/XII 1909 թ.)։ Այդ խնդիրը յաջող լուծում ստացաւ ներկայ Հոգաբարձութեան օրով, երբ ամ՝ 1914 թ. ապրիլի 21-ին՝ այս առթիւ յատուկ խորհրդակցութիւն ունենալով՝ յանձնարարեց իւր անդամ՝ պ. Գրիգոր Զալխուշեանին անձամբ երթալ ս. Էջմիածին Վեհափառ Հայրապետի հաճութիւնն ստանալու համար։ Ի հետևումն այս միջնորդութեան՝ թեմիս Վիճակային Կոնսիստորիայի միջոցով՝ ստացուեցաւ ս. Էջմիածնի սրբազան Օծման արձակած վաճառման թոյլտուութիւնը. «Թոյլ տալ Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի թեմական Դպրանոցի Հոգաբարձութեան, համաձայն իրենց միջնորդութեան, վաճառել Խալիբեան դպրոցի հին շէնքը երեսուն հազար րուբլուց ոչ պակասով՝ և այս գործը կարճել ու ժամանակին տալ Դիւան (Տես Արձ. № 14, 5/VI 1914 թ.)։ Սակայն երբ

Հոգաբարձութիւնը՝ ստացած արտօնութեան զօրութեամբ՝ պատրաստւում էր յիշեալ կալուածը վաճառել՝ գործերից երևաց, որ այդ կալուածը դպրանոցի սեփականութիւն գրուած չէ, ու թէև փորձ եղել է վաղնջական տիրապետութեան օրէնքի հիման վերայ դպրանոցի սեփականութիւն դարձնելու, և մինչև իսկ հաւատարմագիր է արուած եղել տեղի յայտնի փաստաբան Կետրովսկուն, բայց խնդիրը՝ նրա անփութութեան շնորհիւ՝ իսպառ ընթացք չէ ստացել։ Ուստի ներկայ Հոգաբարձութիւնը որոշում է յետ առնել յիշեալ հաւատարմագիրը և յանձնարարել դպրանոցիս նախկին սան՝ փաստաբանի օգնական պ. Գրիգոր Զուբարեանին, որ անձամբ երթայ Թէոդոսիա, առ տեղեաւն կազմէ գիտակ անձանց ցուցակն ու արձանագրէ վկաների ցուցմունքները, կազմել տայ շէնքի ու հողաբաժնի յատակագիծը և ընդհանրապէս կատարէ նախապատրաստական բոլոր կարևոր և հնարաւոր գործողութիւնները։ Յիշատակուած բոլոր նախապատրաստական գործողութիւններն ամենայն բարեխղճութեամբ կատարուած է ու գործը յանձնուած է փաստաբանի, որ արդէն խնդիրը է ներկայացրել դատարան Խալիբեան դպրոցի շէնքն ու հողաբաժինը վաղնջական տիրապետութեան օրէնքի հիման վերայ Դպրանոցիս անուանը արձանագրել տալու համար, բայց առ տեղեաւն քննութիւնը դատարանի կողմից նշանակուած չէ. (Տես Արձ. №№ 5. 7. 4. 4/III, 7/VI, 7/XII 1915 թ.)։

գ. Խալիբեան դպրոցի նման մի կալուած է նաև տեղիս արհեստաւորաց դպրոցի շէնքը, որ եղել է նախապէս Սախաւեանի տուն և գրաւ դրուած Նախիջևանի փոխադարձ վարկի ընկերութեան մօտ։ Ժամանակի Հոգաբարձութիւնը 187.. թուին որոշում է գնել այդ շէնքը և քաղաքիս Հոգևոր դպրոցը այնտեղ գետեղել։ Դրամատունը՝ ի նկատի առնելով, որ Հոգևոր Դպրոցի համար է գնւում շէնքը, զիջանելով Հոգաբարձութեան խնդրին՝ խոստանում է 9000-ի փոխարէն 6500 րուբլով վաճառել և դրամը մասամաս ստանալ։ Այդ շէնքը վերջնականապէս Դպրանոցիս սեփականութիւն է դառնում, երբ Հոգաբարձութիւնը 18..

թուին ամբողջ դումարը հատուցանում է քաղաքի օժանդակութեամբ և ձեռք է բերում կալուածագիր։ Ապագայում, երբ դպրանոցն ստանում է իւր լրիւ կազմը՝ այդ շէնքը նորա պէտքերին չէ բաւարարում, Հոգաբարձութիւնը վարձու է տալիս Արհեստաւորաց դպրոցին չնչին վարձատնով՝ կատարելով օրինական բոլոր ձևականութիւնները։

Այժմ՝ երբ Դպրանոցիս միջոցներն իրեն չեն բաւականանում և Հոգաբարձութիւնն ստիպուած է օտար դռներ բաղխել իւր գոյութիւնը պահպանելու համար, երկար խորհելուց յետոյ՝ պարտք է համարել նախ՝ իւր կալուածներն ըստ արժանոյն շահագործել, և ապա թէ՝ ներել իրեն նոր բարերարներ որոնել. ուստի և որոշել է յիշեալ շէնքը, վաճառել և կամ՝ որոշ փոփոխութիւնների ենթարկելով՝ շահաւէտ կալուած դարձնել։ Այսպէս վարուելու շարժառիթներից մէկն էլ եղել է Հոգաբարձութեանս բարի ցանկութիւնը՝ խթան հանդիսանալու թէ հասարակութեան, թէ ծուխի և թէ դպրոցի հոգաբարձութեան՝ և ստիպել որ յիշատակուած մարմինները լուրջ ուշադրութիւն դարձնեն քաղաքիս մի այլ հաստատութեան վերայ, որ եթէ կոչուած չէ դաղութիս հայութեան հոգևոր գոյութիւնը պահպանելու, սակայն կոչուած է այդ գանգուածի չունևոր դասակարդի տնտեսական վիճակը բարձրացնելու, տնտեսապէս ապրեցնելու։

դ. Ներկայ Հոգաբարձութիւնը՝ նպատակ ունենալով դպրանոցիս մշտական աղբիւրների թիւն ընդարձակել՝ կարգաւորել է յատուկ պատգամաւորի միջոցով՝ դիմել Վեհափառ Հայրապետին, որ Նորին Սրբութիւնը բարեհաճի ս. Խաչ վանքի տարեկան եկամուտի ամբողջ յաւելուածը, ի բաց առեալ վանքի մատակարարութեան և պահպանութեան ծախքերը, յատկացնել ի նպաստ դպրանոցիս, մինչև որ հնարաւոր լինի ինայուն աղբիւրներով ապահովել այդ հաստատութիւնը։

Թէև այս խնդրի նկատմամբ յիշատակուած պատգամաւորի միջոցով ստացուել է Նորին Վեհափառութեան հաճութիւնը, սակայն նորա գործադրութիւնը ներկայումս

անկարելի է դառնում, քանի որ պատերազմի պատճառով ս. Խաչ վանքի հողերը նախկին արդիւնքը չեն բերում, և եթէ ներկայ պայմաններում ս. Խաչ վանքը կարողանայ իւր նախկին նպաստը մատակարարել՝ գոհ պիտի լինել (Տես Արձ. № 13, 21/IV 1914 թ. № 12, 25 II 1914 թ.)։

ե. Ինչպէս յայտնի է 1912 թուին Ռոստով—Նախիջևանի փոխադարձ վարկի ընկերութեանը՝ իւր քառասնամեայ յոբելեանը նշանաւոր կերպով յաւերժացնելու նպատակով՝ որոշեց չորս տարուայ ընթացքում իւր տարեկան շահի որոշ %-ի խնայողութեամբ կազմել քառասուն հազարանոց դրամագլուխ և յանձնել այն տեղիս Հայոց Աղքատաց եկեղեցական Հոգաբարձութեան, պայմանով որ %-ները տարէց տարի տրուին Դպրանոցին։

Հոգաբարձութիւնս՝ իւր անտեսական նեղ վիճակը բարւոքելու նպատակով՝ դիմել է Ռոստով—Նախիջևանի փոխադարձ վարկի ընկերութեան վարչութեանը՝ խնդրելով որ յիշեալ ընկերութիւնը իւր քառասնամեայ գոյութեան յիշատակը յաւերժացնելու համար կազմած յոբելինական ֆոնդը, որ այժմ երեսուն հազար րուբլու է հասել՝ դեռ չամբողջացրած յանձնէ քաղաքիս եկեղեցական Հոգաբարձութեան այն պայմանով, որ ս. յիշեալ գումարի դրամագլխի %-ները այժմէն իսկ տրուին Դպրանոցի Հոգաբարձութեան, ը. թոյլ տալ Եկեղեցական Հոգաբարձութեան, որ Դպրանոցիս Հոգաբարձութեան հետ փոխադարձ համաձայնութեամբ՝ ի դէպս հարկաւորութեան, այդ գումարը գործադրէ արդիւնարեր շէնք գնելու կամ շինելու և գ. ֆոնդը լրացնել յաջորդ տարիներն ըստ հնարաւորութեան (Տես Արձ. № 3 5/XI 1915 թ.)։

զ. Հոգաբարձութիւնս՝ ի նկատի առնելով Խորհրդարանիս կողմից 1892 թ. եղած դիմումը Քաղաքային Դումային, որ սա միջոցներ հայթայթէ եկամուտի որ և է միայուն աղբիւրով ապահովելու նպաստն այն գումարը, որ տարէց տարի տրւում է Դպրանոցիս պահպանութեան համար, և որ այդ խնդրին իւր ժամանակին գոհացում տալու նպատակով կազմուած է եղել յատուկ Յանձնա-

ժողով, այլ և ի նկատի առնելով Դպրանոցիս բացման ու սկզբնաւորութեան հանգամանքները՝ Հոգաբարձութիւնս քաւուք համարեց այս խնդիրը վերստին արծարծել նոր դիմումով, որ կատարուած է արդէն և ընտրուած նոր Ցանձնաժողով, որի անդամների վերայ, իբրև հայ մարդոց՝ բնականաբար ծանրանում է բարոյական պարտականութիւն գլուխ բերելու իրենց հայրերի բարի ծրագիրը, որպէս զի Դպրանոցը պատահարներից զերծ ճնայ և իրենց խիղճը՝ խայթից ազատ։

է. Նոյն այդ ապահովութեան նպատակով Հոգաբարձութիւնս որոշել էր 1915 թուի սեպտեմբերին տօնել Դպրանոցիս 40-ամեակը և՝ տօնի ծրագիրը մշակելու և այլ նախապատրաստական գործողութիւններ կատարելու համար՝ ընտրել էր յատուկ Ցանձնաժողով, որին մանանկցելու պիտի հրաւիրուէին նաև հաստատութեանս նախկին աշակերտները։ Սակայն ներկայ պատերազմը՝ իւր ահաւոր հետևանքներով մի կողմից, և հայ հասարակութեան ընդհանրութեան դրամի և ջանքի գործադրութեան ներհակ հոսանքը միւս կողմից՝ բնական արգելք հանդիսացան Հոգաբարձութեան ծրագրած ձեռնարկութեան (Տե՛ս Արձ. № 13, 21/IV 1914 թ.)։

ը. Տնտեսական ապահովութեան տեսակէտով, այլ և մանկավարժական ու առողջապահական մի շարք անյարմարութիւններ ի նկատի առնելով՝ Հոգաբարձութիւնս ծրագրել էր Դպրանոցի համար նոր շէնք կառուցանել՝ հաւատալով, որ հնարաւոր կլինի շէնքի տեղը քաղաքից ձրիապէս ստանալ, իսկ կառուցումը հարուստ բարերարներից ակնկալել։

Թեմիս սրբազան Առաջնորդը՝ Հոգաբարձութեանս խնդրանօք՝ բարեհաճել էր Դպրանոցի շէնքի տեղի համար դիմում անել Քաղաքային Դումային, սակայն այս խնդիրը՝ Հոգաբարձութեանս ցանկութեամբ՝ դեռ ևս Դումայի քննութեան առաջարկուած չէ, ս. Լուսաւորիչ եկեղեցու և քաղաքի մէջ ծագած ներկայ հողային վէճի շրջանը՝ յիշատակուած խնդրի յարուցման համար՝ անբարեպատեհ

համարելով ու բարեպատեհ ժամանակի սպասելով. իսկ շէնքի կառուցման ծախքը ըստ երևոյթին հատաձայն է հոգալ Ռոստովի յայտնի հայ վաճառական պ. Պետրոս Թախլաճեանը, որ սակայն դեռ իւր բերանացի յայտնած ցանկութեանը՝ գրաւոր և վաւերական ընոյթ չէ տուած։

Եթէ Հոգաբարձութեանս այս ծրագիրն իրականանայ՝ Դպրանոցը ոչ միայն՝ նորագոյն պահանջների համաձայն՝ յարմարաւոր շէնք կունենայ, այլ և հին շէնքը կդառնայ նրա տնտեսական ապահովութեան մի նոր և բաւական զօրաւոր աղբիւր (Տես Արձ. № 13, 21/IV 1914 թ.)

Ահա այն ծրագրերը, որ Հոգաբարձութիւնս իւր եռամեայ պաշտօնավարութեան ընթացքում քաշել է և նոցանից հնարաւորներն ի կատար ածել՝ Դպրանոցը տնտեսապէս ապահովելու համար, ապագային թողնելով՝ մասնաւոր անձանց խոշոր նուիրատուութիւնների շնորհիւ՝ պակասը լրացնել։

II

Հոգաբարձութիւնս՝ առաջնորդուելով Հայրապետական սրբ. կոնդակի ցուցմունքներով՝ փորձել է նաև օգտակար լինել Դպրանոցի ուսումնական գործին։ Նա՝ ի նկատի առնելով գործնական կեանքի պահանջը մի կողմից՝ և դպրանոցի նպատակը միւս կողմից, որ է յատկապէս ուսուցիչ և եկեղեցու սպասաւոր պատրաստել, բնականաբար դասատուդեալ առարկաների մէջ հայ և ռուս լեզուների և կրօնական առարկաների ուժեղացման վերայ առանձին ուշադրութիւն է դարձրել։

ա. Այս սկզբունքով առաջնորդուած՝ Հոգաբարձութիւնս փորձել է յիշեալ լեզուների դիտութեան չափն ընդլայնել, և՝ իւր այս նպատակին հասնելու համար՝ առաջարկել է ինքնուրոյն դրաւոր աշխատանքների քանակը ըստ կարելոյն շատացնել ու նշանակուած թիւը պարտադիր համարել աշակերտների համար և ի նկատի առնել նոցա փոխադրութեան ժամանակ։

Մանկավարժական ժողովն՝ ընդառաջելով Հոգաբարձու-

թեանս ցանկութեան՝ կազմել էր գրաւոր աշխատանքների մի սիրուն ծրագիր, որ անցեալ տարուանից գործադրում է և նրա գործադրութեան օգուտը՝ միայն մի տարի անցնելուց յետոյ անգամ, Հոգաբարձութեանս ակներև եղաւ։

բ. Հոգաբարձութիւնս՝ աշակերտների գիտութեան մակարդակը զոհացուցիչ դարձնելու և նոցա ընդհանուր զարգացումը բարձրացնելու համար՝ առաջարկել է պ. Տեսչին, որ մանկ. ժողովը կազմէ իւրաքանչիւր դասարանի հասունութեան համապատասխան՝ անհրաժեշտ ընթեռնալիք գրքերի ցուցակ, նոցա ընթերցումը պարտադիր դարձնելով աշակերտների դասարան փոխելու համար։ Սակայն Հոգաբարձութեան այս ծրագիրը դեռ ևս գործադրութեան մէջ չէ՝ պահանջուած աշխատանքը ամբողջովին պատրաստ չլինելուն համար։

Հոգաբարձութիւնս՝ ի նկատի առնելով, որ թէ գրաւոր աշխատանքները և թէ ընթերցանելի գրքերի վերահսկողութիւնը (կոնտրոլ), առանց որի ընթերցումը կարող է բաւարար օգուտ չբերել, պահանջում են յատուկ աշխատանք և ժամանակ, որի համար թէ պետական և թէ միւս ազգային միջնակարգ դպրոցներում առանձին վարձատրութիւն է սահմանուած՝ որոշել էր յիշատակուած աշխատանքներն առանձին վարձատրել, բայց դպրոցիս նիւթական անապահովութիւնը ցարդ արգելք եղաւ Հոգաբարձութեանս կատարելու իւր խոստումը։ Սակայն ի պատիւ ուսուցիչների պէտք է խոստովանել, որ իրենց պարտքը կատարում են առանց արտունջի և պահանջի։

Արծարծուած խնդիրներն աւելի ծեծելու և պարզաբանելու և փոխադարձաբար միմեանց հասկանալու համար, այլ և աշակերտութեան դէպի պարապմունքներն աւելի լուրջ վերաբերուել ուսուցանելու և այս նպատակով միջոցներ որոնելու համար՝ Հոգաբարձութիւնս որոշել էր այս ուսումնական տարեկզբին ուսուցչական ու հոգաբարձական մարմիններից խառն ժողով գումարել, որի կատարումը հաւանօրէն կմնայ նոր կազմին։ (Տես Արձ. № 13, 2/VIII 1913 թ.)։

գ. Հոգաբարձութիւնն՝ ի նկատի առնելով մի կողմից արդի երիտասարդութեան բարձրագոյն ուսում ստանալու անյագ տենչը, որ հետևանք է հաւանօրէն կեանքի ներկայ պահանջների և բացատրւում է գոյութեան կռուի համար պատրաստուելու մղումով, միւս կողմից էլ ցանկանալով ազգային կրթարանի պատերի մէջ դաստիարակել Վիճակիս ամեն դասակարգի պատկանող հայ մանուկներին, որով միայն հնարաւոր է ազգային դաստիարակութիւնը մատչելի դարձնել Վիճակիս ամբողջ հայութեան, և ի նկատի առնելով ներկայ պայմանների բարեպատեհութիւնը ծրագրուած նպատակի յաջողութեան տեսակէտով՝ որոշեց յատուկ պատգամաւորի միջոցով իւր խոհերը դնել Վեհափառ Հայրապետի առաջ և խնդրել, որ յարեհաճի միջնորդութիւն յարուցանել մեր դպրանոցաւարտներին պետական բարձրագոյն դպրոցներ մտնելու իրաւունք ձեռք բերելու համար։

Նորին ս. Օծութիւնը՝ գոհութեամբ լսելով Հոգաբարձութեանս ներկայացուցչի զեկուցումը՝ բարեհաճել է տալ իւր բարձր հաճութիւնը այդ մտքով խնդիր յարուցանելու մասին՝ պատուիրելով վիճակագրական և այլ կարևոր տեղեկութիւնների վերայ հիմնուած գրաւոր զեկուցում ներկայացնել Իրեն։ Վեհափառ Հայրապետի առաջարկութեան համաձայն Հոգաբարձութիւնս կազմեց յատուկ յանձնաժողով, որպէսզի յարուցուած խնդիրն ըստ ամենայնի ուսումնասիրէ և լուսաբանէ ու մի լուրջ զեկուցագիր պատրաստէ։

Ներկայումս ամեն ինչ կատարուած է ու Նորին Վեհափառութեան ուղարկուած՝ և Հոգաբարձութիւնս անհամբեր սպասում է՝ թէ երբ Նորին Սրբութիւնը ընթացք կտայ խնդրին և իւր կողմից յատուկ պատգամաւորութիւն կնշանակէ գործին հետևելու և նորա ընթացքն արագացնելու և յաջողեցնելու համար։

դ. Հոգաբարձութիւնս՝ կամենալով պ. Տեսչին տնտեսական հոգսերից ազատել և միջոց տալ, որ իւր ոյժերն ամբողջովին նուիրէ կրթական ու դաստիարակչական գործին՝ կանոնադրութեան 5-րդ և 6-րդ յօդուածների զօրու-

թեամբ՝ հաստատել է տնտեսական խորհուրդ, որով միաժամանակ կամեցել է նաև Դպրանոցիս տնտեսական վիճակն ըստ ամենայնի կանոնաւոր հիմքերի վերայ դնել» (Տես Արձ. № 7, 1913 թ.)։

III

Հոգաբարձութիւնս զբաղուել է նաև դաստիարակչական խնդիրներով և այդ նպատակով որոշել է ունենալ Տեսչի օգնական, որի վերայ յատկապէս ծանրանում է կանոնադրութեան համաձայն՝ դաստիարակչական գործը։ Սակայն դժբախտաբար Հոգաբարձութեանս այդ դիտաւորութիւնը անգործադրելի է մնացել մինչև այժմ մասամբ նիւթական միջոցների սղութեան և մասամբ էլ համապատասխան անձի բացակայութեան պատճառով (Տես Արձ. № 11, /VI 1913 թ.)։

Ի վերջոյ Հոգաբարձութիւնս՝ հասարակութեան գիտակ կացուցանելու համար դպրանոցի կեանքին՝ անցեալ տարուանից, ըստ նախնոյն, որոշել է Դպրանոցի ուսումնական և տնտեսական համառօտ հաշիւը հրատարակել ու կատարել է։

Ահա ներկայ Հոգաբարձական կազմի եռամեայ գործունէութեան ընդհանուր պատկերը, որ նա բարոյական պարտք է համարում այսօր, իւր հրաժեշտի օրը, դնել իրեն ընտրողների և նոցա միջոցով հայ հասարակութեան առաջ, յուսալով՝ որ հասարակութիւնը՝ ի մտոյ ծանօթանալով ազգային այս մեծ կրթարանի նպատակի, կատարելիք դերի և կարիքների հետ՝ իւր կողմից եռանդուն աջակցութիւն ցոյց կըտայ այդ հաստատութիւնը հնարաւոր կատարելութեան հասցնելու։

Կազմեց՝ Հոգաբարձութեան նախագահ

Գէորգ վարդապետ

19/XII 1915 թ.